

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԾՐՈՒՆԵՒ

ԱՅՐԻ ՍՕՅԻԱ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ և իր աշխիւնները՝ ԻՇԽԱՆՈՒԶԻ ՄԱՐԻԱՄ ԲԵԿՈՒ-
ԲԵԿԵԱՆՆԵՐ և ԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻԹԱՆԵԱՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ են իրանց ազգա-
կաններին և ծանօթներին ներկայ լինելու
ՅՈՎՀԱՆՆԵԱ ՉԻԹԱՆԵԱՆԻ
հոգեհանգստին, որ լինելու է յուլիսի 10-ին, կիրակի, Մոսկու. ս. Գեորգ եկեղե-
ցում: Ս. պատարագը սկսվելու է ժամի 10-ին, իսկ ժամի 11-ին հոգեհանգստը:
1—1

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՒ

ԿԵՆՏԱՐԱՎԱՅ ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍՎԱԾ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռ., տաճն և մէկ
և տաճն ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝
8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք
ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական
1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ:
Օտարազգայացիք պէտք է դիմեն հետեւեալ
հասցեով՝ Тифлисъ. Редакция «Мшакъ», իսկ
արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապստոլի հոգեհոգը. ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՏԵՆ-
տեսական ծանր վիճակ. Նաճակ Արարչութեան
Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրի-
նազկներ անարխիստների դէմ. Կորեական հարցը.
Նախակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. —
ԽԱՌՆ. ԼՈՐԻՆ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սովետա-
րի մէջ.

ՍՊԱՍՎՈՂ ՀՈՒՆՁԸ

Մեր զիւղացու ամբողջ ձեռնարկով լինելով
որոշվում է այժմ, ամառվայ ամիսներին,
գաշաւերի գրութեամբ: Եթէ երաշար,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՄԷՋ

II

Մի հին, մեծ բաղանիքի մնացորդն է, որ իբր
բնակարան է յատկացրած այն թշուառ գաղթա-
կաններին, որոնց չէ աջակցում կամ կասեցնի-
րի և կամ զիւղացիներին անհրաժեշտ ապաստարան
գտնել:

Բաղանիքի այդ սենեակը այնպիսի լաւ արձա-
գանք ունի, որ երբ անցնում էք նրա կողքից,
ապակի չոռնեցող ու քարոքանող լուսամտաներից
դուրս են վիժում իսկապէս դժօրային ձայներ:
Մանուկների ձիւ, կանանց բարկանալու ձայներ
ու անէծքներ, մարդկանց դուռում գոչում այնպէս
խառնվել են իրար, որ կարծում էք, թէ գտնվում
էք հրէական ժողովների մէջ: Դրան չեմք վրա
նստուկ են, թիկն ընկել կամ պառկել կանայք,
մարդիկ. մանուկները թաւալում են արեւի մէջ:
Նրանց բոլորի դէմքերը սև են, վշտերից ու նե-
ղութիւններից կազմված կնճիւղներ պարզվում են
դէմքի ամեն ուղղութեամբ, արևուտ և կասկածող
հայեացքով նայում են ձեզ և եթէ նկատում են,
որ քիչ լաւ էք հարգելով, որպիսի աղերսալի
դէմքով նայում են ձեզ ձեռքեր, որպիսի աղաչա-
ւոր ձայնով ողորմութիւն, օգնութիւն են խնդ-
րում նրանք և որպէս անյաղութեամբ հաւաքում

կարկուտը, զանազան միջանակներ զննե-
լին ցանցները, այն ժամանակ կորու ու-
րեմն և զիւղացու ապրուստի միջոցը: Իսկ
եթէ բոյսերն աճումը կատարվել է կանո-
նաւոր, հասկերը առատ են, — ապահովված
է զիւղացու տարվայ կեանքը:
Անցնալ տարվայ դժբաղդութիւնը իր հե-
տեանքներով՝ դեռ չէ անցել բոլորովին:
Լուսնադաշտերում դեռ նոր հունձը չէ հա-
սել և զիւղացիները պարտքով փոխա-
ռութեամբ, կաթնեղէն գործածելով մի կերպ
կառավարվում են, յոյս դնելով առաջիկայ
հունձի վրա, որպէս զի իրանց համար պա-
շար պատրաստեն և իրանց պարտքը, զոնի
մասամբ, հատուցանեն:

Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են
տալիս, որ տարիարարվում, չրային տեղե-
րում, ուր բոյսերը վաղ են հասնում և
ուր ցորենը ու գարին արդէն քաղել են,
հունձը բաւարար է իսկ մի քանի տեղ մին-
չև անգամ շատ աճող: Ինչ վերաբերում է
լուսնադաշտերին, սարահարթներին, որտեղ
իսկապէս գտնվում է հացաբոյսերի ամե-
նամեծ քանակութիւնը և ուր ցորենը ու
գարին կազմում են զիւղացու եկամուտի
գլխաւոր աղբիւրը, մեզ հասած տեղեկու-
թիւնները շատ էլ ուրախացնող չեն: Գար-
նան սկզբներին աճող և առատ բուսած
արտերը ենթարկվել են երաշտի: Գիւղա-
ցիները սպասում են անձրեւների, բայց օրեր
անցնում են և անձրեւներ չը կան: Նոր
Բայազէտի գաւառից լսվում են յուսա-
հատ ձայներ, որովհետեւ զիւղացիները վա-
րկանում են, որ անցնալ տարվայ իրանց վի-
ճակը կրկնվի:

Բայց դեռ վաղ է, ի հարկէ, ներկայացու-
թիւններ անել, որովհետեւ մինչև սարա-

ն են ձիւ կոպէկներն ու վրա թափվում ձեռ տուող
ձեռքը համբուրելու՝ օրհնանքների կարկուտ տե-
ղալով ձեռ գլխին... Ծնող ապագայութիւն է
թողնում այդ բոլորը:

Մարդիկ ու կանայք, որոնք իրանց երկրում ո-
ղորմութիւն էին կաշխում, այստեղ ձեռ առնել
տառապում են կեղտի և անօթութեան մէջ, պար-
զում են ձեռ իրանց զոյգօժան ձեռքը և ամեն
տեսակ գոն և ստոր ձեռքով արտայայտում ի-
րանց շնորհակալութիւնը:

Շատ զօրեղ է ստամոքսը. չէ որ նա է, որ այդ
մարդկային մեծ կոտորի ձգել է այսօր կեղտի
և ստորութեան մէջ. չէ որ նա է, որ անասնա-
կան բթութեան և բուսական կեանքի մէջ է մղել
դրանց, սպանում է հասակաւորներին, անբարոյա-
կանացնում կանանց, ոչնչացնում մանուկներին և
նրանց թաքտ հասակը կեղտի ու վշտերի մէջ
զարգացնում:

Պէտք է մօտենալ այդ յետ մնացած, բայց և
ամենքի աչքի առջև գտնվող բաղանիք-որջին, մըտ-
նել նրա մէջ, նայել գաղթականների անկողնին-
քին, նայել խոնաւ դեմքին, նայել նրանց այն
հագուստներին, որոնք կազմված են բլբլման
կտորներից և բազմազան գոյներով կարկառանա-
րից միայն: Բայց է կուրծքը, բայց մէջքը, բոքի
ոտները, անմաքթութեան ու կեղտի մէջ թափա-
ված է նրա ամբողջ մարմինը, միջանակներով լի-
կերված, սևացած և հարված են նրա անգամները,
նրա ուղեղն իսկ... նա այլ ևս ընդունակ չէ խո-
նելու և կամ նոյն իսկ ցաւ դժբաւ. ցաւերի մեծ

հարթների հունձը՝ դեռ երկու շաբաթ ժա-
մանակ կայ և մի լաւ, առատ անձրեւ կարող
է մեծ զօրք տեսնել:

Ահա Ալեքսանդրօպոլի գաւառը, դրա հետ
միասին կարելի նահանգի մի մասը յուսահա-
տական դրութիւնից փոխվեցին նպաստա-
ւոր դրութեան, շնորհիւ այն առատ անձ-
րեւի, որ տեղացի է անցնալ շաբաթ մեծ
տարածութեան վրա, սկսած Շիրակի սահման-
ներից մինչև Կարա: Ստորին և տաք տեղերում
այդ անձրեւը արդէն բաւական է ներկայ
հունձի համար. իսկ բարձրադիր տեղերում
կարիք կայ դարձեալ անձրեւի մի կամ եր-
կու անգամ:

Անդրկովկասի համար մեծ նշանակու-
թիւն ունի ոչ միայն մեր երկրի առա-
տութիւնը, այլ և մեր հարեան երկիրնե-
րի, Թուրքիայի և Պարսկաստանի սահմա-
նակից նահանգների զիւղական արդիւնա-
բերութեան վիճակը: Ինչպէս ցոյց տուեց
անցնալ տարվայ ծանր փորձը, մեր երկրը
իր վրա էր վերցրել ոչ թէ միայն ներքին
գործածութեան համար հաց մատակա-
րարելը, այլ և ստիպված էր սահմա-
նակից երկիրներից եկած կարօտեալների
օգնել և կերակրել:

Այդ պատճառով մեզ համար շատ մեծ
հետաքրքրութիւն և կարեւորութիւն ունեն
մանրամասն լուրեր թէ Անդրկովկասի և
թէ սահմանակից երկիրներին արդիւնաբերու-
թեան մասին:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՆՏԵՍԱԿԱՆ ԽՄԱՆՐ ՎԻՃԱԿ

Տեսնական տաղանդը սպասում է սաստ-
կանալ և չը տեսնված աղէտներ առաջ բերել: Հա-
ցի դինը սկսել է բարձրանալ, թէ և զիւղացիներից
շատերի համար այդ այլ ևս նշանակութիւն չունի,
որովհետեւ ինքնապէս այնքան ուժաւորւում են եղել,
որ նրանց համար թէ թանգ և թէ էժան հացը
անմատչելի է. այլ ևս բան գնելու հնար չէ մնա-
ցել: Վնչ որ ունենին ծախեցինք հացի համար,
առում են բոլորը, — մինչև այսօր կիսաբացած
ապրիկներ, իսկ ինչ որ մնացել էր, վերջին ոյ-

քանակութիւնը թմեցնել — անզգայացրել է նրա
ներկերը:

Հարց էք տալիս. նա ձեզ պատասխանում է
անկապ, անմիտ կերպով. հակասութիւններով լի
է նրա պատմածը. նա խեղճ կորցրածի պէս է.
միայն իր բուսական կեանքի, միայն հացի վրա
է մտածում. կորել է նրա մէջ նոյն իսկ որդիա-
կան սիրոյ դժգոհութիւնը: Նրա արտասանած անկապ
նախադասութիւններից միայն այսքանն էք կզ-
րակացնում, որ նա ծնվել է մորակի ու հորաւած-
ների տակ, ժառանգել է իր պապերից նոյնը և
մանկութիւնից մինչև այժմ նրան հարուածն է
անուցել, վիշտը կերակրել, ցաւը մեծացրել — հա-
տուածացրել: Նրան խիղի է ամեն հասնող, խիղի
է բնութիւնն իսկ. նա, զոյութեան կուրծք ընկե-
վող էակի պէս, վերջին կայծն ունի միայն իր
մէջ... նա խօսում է միմիայն հարուածների մա-
սին և ուրիշ ոչինչ:

— Բարդի թալանեցին... կորացին... սպանե-
ցին. հաց չունինք, կոտորվեցինք. վերջինք...
պարտքեր...:

Այսպիսի կցկաւոր բառերից է կազմված նրանց
պատմութիւնը, նրանց, որոնք հազարներով անց-
նում են սահմանը, լցվում են Կարա, Կարդուան,
Օլթի և այլն, մուրում են, ոչնչանում, փչանում
կամ կոտորվում, դատարկ թողնելով մի և նոյն
ժամանակ իրանց հողերը, որոնց նրանք չէնաց-
նում էին, որոնց ծնունդ են նրանք և որոնցից
բաժանվել նոյնն է, թէ ալլա սս ե. ե. (allé-
ner), փչանալ, կորուսել. մի և նոյն է, թէ թիւր-

մերս լարեցինք, հողը գցեցինք. այժմ եթէ նրա-
նից էլ յոյսերս կտրվի, մեզ մնում է ցրվել:

Եւ իրաւի, եթէ խորշակահարութիւնը այսպէս
շարունակվի, բոլոր ցանքերը փտանդվելու են և
մաքը դժուարանում է երակայնել անգամ մեր
լուսնային գաւառների վիճակը այդ դէպքում
Տեղի կունենայ անսովոր աղետ, որովհետեւ
զիւղացիների մեծագոյն մասը, զրկվելով բանող
անասուններից և հողագործական գործիքներից,
ու անընդունակ դառնալով հողագործութեան,
ստիպված պիտի թողնեն և ցրվեն այնպիսի տե-
ղեր, ուր կամ աշխատանքով, կամ եթէ աշխա-
տանք չը գտնվի, գոնէ մուրացկանութեամբ կա-
րողանան քաղցից ազատվել: Հէց այժմ դառնում
են բազմաթիւ ընտանիքներ, որոնք կորցրել են
հողագործութեամբ պարապելու ընդունակութիւ-
նը. իսկ եթէ խորշակահարութիւնը շարունակվի,
դա կը դառնայ ընդհանուր երեւոյթ իր բոլոր հե-
տեանքներով:

Արդէն այդ երեւոյթի նշանները նկատելի են:
Մեծամասնութեան համար, ցանքերի կորու-
սեան դէպքում, ոչ թէ ոչինչ բան չի մնայ
եկող տարվայ արդիւնաբերութեան համար, այլ
նրա գնով հարեւ նարաւոր լինի մի քանի
ամիս ապրել: Այդպիսով մեր լուսնային գաւառների
աղաքանակութեանը հողագործական կատարեալ
ուժաւորութիւն է սպառնում, ցանքերի վնաս-
վելու դէպքում: Այդ գաւառների վրա մի ինչ որ
չար ճակատագիր է ծանրացել ահա մի քանի
տարուց ի վեր, անձրեւ կորցրել է իր կանոնաւորու-
թիւնը. կամ բոլորովին չէ գալիս, կամ գալիս է
այնպիսի ժամանակ, երբ միայն վնաս կարող է
հասցնել հողագործութեան, այն է կամ ցանելու,
կամ հնձելու և կամ կաշխելու ժամանակ. իսկ հա-
կաւոր ժամանակ սակաւ է գալիս: Ահա աւելի քան
մի ամիս է, թէ Արարչութեան, թէ Գարաչիչա-
գում, թէ Նոր-Բայազէտի գաւառում, առհասա-
րակ Ներսիսի նահանգի լուսնային գաւառներում,
անձրեւ դադարել է գալուց: Արարչութեան այժմ
ամպերը երեւմի-երեւմի ժողովում են և իսկոյն
ցրվում, առանց մի կաթիլ անձրեւ գցելու ցամա-
քած երկրի վրա:

Գիւղացին տեսնում է, որ իր վերջին յոյսը ո-
չնչանում է խանձված հողի մէջ: Սարսափելի է

քաջ Հայաստանի հայ ազգաբնակչութիւնը հեռ-
դիտէ իր նուազման ու վախճանին մօտեցնել:

Բայց այդ բոլորը, կրկնում ենք, ոչ թէ այս
տարի է, այլ անցնալ հոկտեմբերից սկսած ամեն
քաղում հանդիպել կարելի է այդպիսի մուրացող,
փչացող արարածների: Եթէ դեռ պատահում են
այնպիսիները, որոնց մէջ երեւում է մի քիչ թար-
մութիւն և կեանք, դրանք էլ նոր մտնողներն են
միայն, նոր եկողները, որոնց դեռ միմանց վրա
չեն թափված բաղանիքների, փողոցների և ձրի
ճաշարանների մէջ, որոնց բարեգործական ընկերու-
թիւնները դեռ չեն մտցրել իրանց ցուցակների մէջ,
որպէս լուսնային մուրացիկներ: Եթէ դեռ
կեանք է երեւում այդ նոր եկողների մէջ — դա
շատ կարճ է տևելու: Կանցնեն օրեր, այդ նորե-
րը կը չփվեն հինքի հետ, կը լինեն փողոցի փո-
ղոց, գիւղի գիւղ, անօթութիւնը նրանց կը սո-
վորցնէ բոլորութիւն, խաբեղալով իւր ու ստո-
րութիւն — կանքաբոյսականացին. իրանց հետ բե-
րած մանուկները կունենան չըջանալով, որտեղից
նրանք միայն քաղահատութիւն պիտի չնչն և
ահա անդունդն են գլորվում ոչ միայն մի քանի
խումբ հայեր, այլ և յետագայ սերունդներն էլ
քաղում են իրանց ետեղի...

Այսպէս հարկւրներ, այսպէս հազարներ մի-
մանց ետեղի, ամեն օր, նոյն իսկ ամեն ժամ,
թողնում են իրանց երկիրն ու հողը, իրանց
արեն ու կլման և իրանցից կէտը բրդերի յար-
ձակումներին, կէտը ճանապարհին դիմ տալուց
յետոյ, գալիս են մնացածով էլ փչանալու, են:

